TP-07/09 22.10.2009թ.

# Հայաստանի Հանրապետության (1) Կառավարության գործունեության գնահատականների (GS Index) և (2) Բարձրագույն կրթական համակարգի բարեփոխումների հնարավորությունը՝ շահագրգիռ կողմերի գնահատականներով (ES Index)

# հետազոտությունների փաթեթ առաջարկ

## 1Ա. Տեխնիկական առաջարկ

**ՀՀ վարչապետ՝**
**պր-ն Տ. Սարգսյանին**

Ստորև Ձեզ ենք ներկայացնում

(1) Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության գնահատականների (Government Success Index),

(2) Բարձրագույն կրթական համակարգի բարեփոխումների հնարավորությունը՝ շահագրգիռ կողմերի գնահատականներով (Education Success Index),

հետազոտությունների փաթեթի տեխնիկական առաջարկը՝ համապատասխան Ձեր կողմից ներկայացված պահանջների և քննարկված խնդիրների: Սույն Տեխնիկական առաջարկը ենթակա է փոփոխությունների՝ բանակցությունների արդյունքում:

Հուսով ենք, որ IPSC խորհրդատվական ինստիտուտի ներկայացրած տեխնիկական առաջարկը կարժանանա Ձեր հավանությանը:

Հարգանքներով՝

**Հովհաննես Գրիգորյան**

Տնօրեն

## 1Բ. Տեխնիկական առաջարկի նկարագիր

*Հետազոտության անվանումը*

**(1) Հայաստանի Հանրապետության Կառավարության գործունեության գնահատականների հետազոտություն (Government Success Index)**

*Հետազոտության համառոտ նկարագիրը*

Հետազոտությունն ուղղված է հասարակության ներկայացուցչական ընդգրկման միջոցով կառավարության գործունեության մինչև 14 ուղղությունների գնահատականների դուրս բերմանը՝ ինչպես ազգային, այնպես էլ առանձին մարզերի և բնակավայրերի մասշտաբով՝ կառավարություն-հասարակություն կոմունիկացիայի ռազմավարության սահմանման և արդյունավետության բարձրացման նպատակով:

*Հետազոտության նպատակը*

Հետազոտության հիմնական նպատակն է հաշվարկել կառավարության գործունեության դրական և բացասական արձագանքները ըստ ոլորտների և ըստ բնակավայրերի և առաջարկներ ներկայացնել կառավարությանը՝ հասարակական հիմնախնդիրների ճիշտ հասցեագրման և ձեռնարկված միջոցառումների արդյունավետության բարձրացման համար:

*Հետազոտության խնդիրները*

Հետազոտության նպատակին համապատասխան առանձնացվել են հետևյալ խնդիրները.

1 Գնահատել ՀՀ կառավարության գործունեության արդյունավետությունը հետևյալ առաջնային ոլորտներում.
- 1.1 Կրթության և գիտության որոլտ,
- 1.2 Առողջապահության ոլորտ,
- 1.3 Գործազրկություն և աշխատանքի ապահովում,
- 1.4 Սոցիալական ապահովության համակարգ (այդ թվում՝ կենսաթոշակառուներ),
- 1.5 Հարկային և մաքսային քաղաքականություն՝ ազատ տնտեսվարման հնարավորություններ,
- 1.6 Գյուղատնտեսության ոլորտ,
- 1.7 Արդարադատության համակարգ,
- 1.8 Մարդու իրավունքների և ազատությունների ապահովում,
- 1.9 Տրանսպորտի և կապի ոլորտ,
- 1.10 Քաղաքաշինության ոլորտ,
- 1.11 Համայնքային զարգացում՝ ՏԻՄ-երի աշխատանք,
- 1.12 Բնապահպանական ոլորտ,
- 1.13 Կոմունալ - կենցաղային պայմանների ապահովում,
- 1.14 Կառավարություն-հասարակություն հարաբերությունները և համագործակցության աստիճանը:

2 Գնահատել կառավարության գործունեության տեսանելիությունը սոցիալ-ժողովրդագրական և աշխարհագրական տարբեր խմբերի ներկայացուցիչների մոտ (կրթություն, զբաղվածություն, եկամուտներ, բնակավայր և այլն):

3 Գնահատել սոցիալական տարբեր խմբերի ներկայացուցիչների առավել ակտուալ հիմնախնդիրները և դրանց լուծման սուբյեկտիվ գնահատականները:

4 Ուսումնասիրել օբյեկտիվ և սուբյեկտիվ այն գործոնները, որոնք պայմանավորում են սոցիալ-ժողովրդագրական և աշխարհագրական տարբեր խմբերի ներկայացուցիչների վերաբերմունքը կառավարության նկատմամբ՝ կոմունիկացիոն արդյունավետության բարձրացման նպատակով:

5 Հետազոտության արդյունքների հիման վրա առաջարկներ ներկայացնել կառավարությանը՝ յուրաքանչյուր ոլորտում առաջնահերթ քայլերի նախանշմամբ, ինչպես նաև հանրությանը դրանք ճիշտ ներկայացնելու մեխանիզմներով:

6 Կազմել "կառավարություն-հասարակություն" ռազմավարական համագործակցության գործողությունների պլան՝ երկկողմանի տեղին և ժամանակային քայլերի սահմանմամբ:

***Հետազոտության իրականացման փուլերը***

GS Index հետազոտությունն ենթադրվում է իրականացնել մեկ տարվա ընթացքում առնվազն 4 անգամ՝ եռամսյակային ժամկետներում: 2009թ-ին կանցկացվի մեկ հետազոտություն նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում:

Յուրաքանչյուր հետազոտություն կազմված է լինելու հետևյալ փուլերից.

1. **փուլ-** *նախապատրաստական աշխատանքներ*, որոնք ենթադրում են հետևյալը՝
   - ✓ հետազոտության գործիքների և հարակից նյութերի/ երթուղային թերթ, որակի ստուգման ձևաթուղթ և այլն/ մշակում և հաստատում պատվիրատուի կողմից,
   - ✓ Հետազոտության պլանավորում, ինչպես նաև այլ նախապատրաստական աշխատանքներ (հարցազրուցավարների հետ թրեյնինգների անցկացում, նյութերի տպագրություն և բազմացում և այն):

2. **փուլ-** *դաշտային աշխատանքներ*, որն բաղկացած է հետևյալ փուլերից՝
   - ✓ հարցումների անցկացում,
   - ✓ դաշտային աշխատանքների որակի ստուգում:

3. **փուլ-** *տվյալների մշակում*, որն իր հերթին բաղկացած է հետևյալ ենթափուլերից՝
   - ✓ հարցաթերթում ընդգրկված բաց և կիսաբաց հարցերի փակում,
   - ✓ հարցաթերթերի կոդավորում,
   - ✓ տվյալների մուտքագրում SPSS շտեմարան,
   - ✓ տվյալների բազայի մաքրում:

4. **փուլ-** *հաշվետվության պատրաստում և ներկայացում*, որը բաղկացած է լինելու հետևյալ բաժիններից.

- ✓ մեթոդաբանական հաշվետվություն,
- ✓ բովանդակային հաշվետվություն և առաջարկներ:

***Հետազոտության ընտրանքը*** Հետազոտության ընտրանքը հաշվարկվում է նպատակից և խնդիրներից՝ ինչպես նաև տվյալների ճշգրտության և ներկայացման խորությունից: Առաջարկվում են հետևյալ չափանիշները.

- Վստահության մակարդակ՝ 95-97% ազգային մասշտաբով ±3% սահմանային սխալի պարագայում և 80-85%՝ մարզային մակարդակով՝ ±4.5% սահմանային սխալի պարագայում:
- Տվյալների առնվազն երկչափ և առավելագույնը եռաչափ ներկայացում (օրինակ՝ բնակավայր+եկամուտ+զբաղվածություն):

Այս պարագայում յուրաքանչյուր հարցման ընտրանքը կլինի **1600-2000 տնային տնտեսության** չափով՝ Երևանում, ՀՀ բոլոր մարզկենտրոններում, ինչպես նաև այլ քաղաքներում և գյուղերում:

1 Գ.

*Հետազոտության անվանումը*

## (2) Բարձրագույն կրթական համակարգի բարեփոխումների հնարավորությունը՝ շահագրգիռ կողմերի գնահատականներով (Education Success Index)

*Հետազոտության համառոտ նկարագիրը*

Հայաստանում բարձրագույն կրթության որակի և արդյունավետության բարձրացման, ինչպես նաև բարձրագույն կրթության արժեքի բարձրացման համար այսօր ստեղծվել է համակարգի բազմակողմանի և խորը ուսումնասիրության անհրաժեշտություն: Հետազոտությունը ուղղված է քանակական և որակական հետազոտությունների միջոցով ինչպես պետական, այնպես էլ մասնավոր ԲՈՒՀերի և այդ ոլորտի բոլոր մակարդակների և ճյուղերի ներկայացուցիչների ընդգրկմամբ ստանալ ամբողջական պատկեր բարձրագույն կրթական համակարգի (այսուհետ՝ ԲԿՀ) գործառնության մասին:

*Հետազոտության նպատակը*

Հետազոտության նպատակն է բացահայտել Հայաստանում գործող բարձրագույն կրթական համակարգի ներքին և արտաքին գնահատականը համապատասխան կողմերի տեսանկյունից և ընդհանուր առմամբ իրականացվող բարեփոխումների տեսանելիությունն և դրանց նկատմամբ վստահությունը:

*Հետազոտության խնդիրները*

Հետազոտության նպատակին համապատասխան առանձնացվել են հետևյալ խնդիրները.

1. Դուրս բերել ԲԿՀ-ի /մասնավոր, պետական/ նկատմամբ ուսանողների դիրքորոշումները, գնահատականները, սպասումները:
2. Դուրս բերել ԲԿՀ-ի /մասնավոր, պետական/ նկատմամբ ավարտական դասարանում ուսանող դպրոցականների դիրքորոշումները, գնահատականները, սպասումները:
3. Դուրս բերել ԲԿՀ-ի /մասնավոր, պետական/ նկատմամբ դասախոսների դիրքորոշումները, գնահատականները, սպասումները:
4. Գնահատել ԲԿՀ-ի թափանցիկությունը և հաշվետվողականությունը շահագրգիռ կողմերի տեսակետից:
5. Բացահայտել ԲԿՀ-ի կենտրոնում գտնվող սովորողի կերպարը (ում է ուղղված համակարգը՝ վատ թե լավ ուսանողին)
6. Գնահատել համեմատելի որակավորման համակարգի ներդրման նախադրյալները (ազգային և միջազգային համատեքստը):
7. Գնահատել հայաստանյան ԲՈՒՀ-երի համագործակցության ներուժի առանձնահատկությունները (ֆինանսական, իրավական գիտական հետազոտությունների և կրթական ծրագրերի տեսանկյունից):

8. Գնահատել ուսանողական շարժունակության ներուժը՝ ուսանողների ԲՈՒՀ-ը կամ մասնագիտությունը փոխելու հնարավորությունները ինչպես Հայաստանում, այնպես էլ եվրոպական երկրներում:
9. Գնահատել ակադեմիական անձնակազմի վերապատրաստման, փոխանակման հնարավորությունները և Հայաստանում և եվրոպական երկրներում:
10. Բացահայտել կրթության՝ որպես կապիտալի, հասարակական արժեքի ընկալումները ուսանողների կողմից (կրթությունը որպես միջոց, թե նպատակ):
11. Պարզել ԲՈՒՀ-երի ինքնավարության մակարդակը, ինչպես նաև նրանց դերը և պատասխանատվության շրջանակը բարձրագույն կրթության որակի ապահովման գործում:
12. Դուրս բերել ԲԿՀ-ի և աշխատաշուկայի համադրելիության աստիճանը
    - 12.1 գործատուների տեսանկյունից
    - 12.2 ԲՈՒՀ-երի շրջանավարտների տեսանկյունից:

***Հետազոտության մեթոդաբանությունը***

Հետազոտությունն առաջարկված նպատակներին և խնդիրներին համապատասխան իրականացնելու համար ենթադրվում է այն իրականացնել եռակողմ վերլուծության մոդելով: Այս մոդելն հնարավորություն է տալիս պարզել բոլոր շահագրգիռ կողմերի տեղեկացվածությունը/վերաբերմունքը/շահագրգռվածությունը բարձրագույն ուսումնական համակարգի բարեփոխումները և դրանց անհրաժեշտության ու հնարավորության գնահատականները՝ հաշվի առնելով հետևյալ կոմպոնենտները.




**Գծապատկեր 1 ES Index վերլուծական սխեմա**

Այս մոդելով վերլուծությունը հնարավորություն է ընձեռում հաշվարկել ԲԿՀ բարեփոխումների տեսալականի ընկալումները, բոլոր շահագիգրռ կողմերի (ուսանողներ, դասախոսներ, վարչակազմ և փորձագետներ) գնահատականների հիման վրա՝ SWOT վերլուծության արդյունքների համախմբմամբ և բացահայտելու այն օղակը, որտեղ այդ բարեփոխումները հանդիպում են առավելագույն խորընդոտների (տեսլականի՝ ուղենիշի անտեսանելիություն, մոտիվացիայի պակաս, թե ցածր վերահսկողություն):

***Հետազոտության իրականացման փուլերը***

Առաջարկվում է իրականացնել ES Index-ի baseline հետազոտություն, բացահայտելու համար ներկա իրավիճակը:

Բարեփոխումների ազդեցության հետագա դրսևորումները բացահայտելու և գնահատելու համար նպատակահարմար է անցկացնել գնահատող հետազոտություններ առնվազն տարին երկու անգամ: 2009թ-ի նախատեսվում է իրականացնել մեկ հետազոտություն նոյեմբեր, դեկտեմբեր ամիսների ընթացքում:

Յուրաքանչյուր հետազոտություն կազմված է լինելու հետևյալ փուլերից.

1. **փուլ-** *նախապատրաստական աշխատանքներ*, որոնք ենթադրում են հետևյալը՝
   - ✓ հետազոտության գործիքների և հարակից նյութերի/ երթուղային թերթ, որակի ստուգման ձևաթուղթ և այլն/ մշակում և հաստատում պատվիրատուի կողմից,
   - ✓ Հետազոտության պլանավորում, ինչպես նաև այլ նախապատրաստական աշխատանքներ (հարցազրուցավարների հետ թրեյնինգների անցկացում, նյութերի տպագրություն և բազմացում և այն):

2. **փուլ-** *դաշտային աշխատանքներ*, որն բաղկացած է հետևյալ փուլերից՝
   - ✓ հարցումների անցկացում,
   - ✓ դաշտային աշխատանքների որակի ստուգում:

3. **փուլ-** *տվյալների մշակում*, որն իր հերթին բաղկացած է հետևյալ ենթափուլերից՝
   - ✓ հարցաթերթում ընդգրկված բաց և կիսաբաց հարցերի փակում,
   - ✓ հարցաթերթերի կոդավորում,
   - ✓ տվյալների մուտքագրում SPSS շտեմարան,
   - ✓ տվյալների բազայի մաքրում
   - ✓ սղագրությունների պատրաստում:

4. **փուլ-** *հաշվետվության պատրաստում և ներկայացում*, որը բաղկացած է լինելու հետևյալ բաժիններից.
   - ✓ մեթոդաբանական հաշվետվություն,
   - ✓ բովանդակային հաշվետվություն և առաջարկներ:

***Հետազոտության ընտրանքը***

Քանակական հետազոտության ընտրանքը հաշվարկվում է նպատակից և խնդիրներից՝ ինչպես նաև տվյալների ճշգրտության և ներկայացման խորությունից: Այս պարագայում քանակական հետազոտության ընտրանքը կլինի 1000-1200՝ ընդգրկելով Երևանում գործող բոլոր մասնավոր և պետական ԲՈՒՀ-երի ուսանողներին և դասախոսներին:

Նախատեսվում է նաև անցկացնել խորին և փորձագիտական հարցազրույցներ բոլոր ԲՈՒՀ-երի վարչական անձնակազմի ներկայացուցիչների հետ: Ընդհանուր առմամբ 25-30 խորին և փորձագիտական հարցազրույցներ:

## 2 Ա. Դաշտային աշխատանքների նկարագիր

***Դաշտային աշխատողներ***

Հարցազրուցավարների ընտրությունը կատարվելու է կազմակերպությունում ներգրավված 55 դաշտային աշխատողներից, ովքեր տիրապետում են սոցիոլոգիական հետազոտությունների տարբեր մեթոդների: Բոլոր աշխատողները մասնակցել են կազմակերպության կողմից իրականացված հետազոտություններին և համապատասխանում են կազմակերպության կողմից առանձնացված որակի ստուգման չափանիշներին (ավելի մանրամասն կարող եք տեղեկանալ www.ipsc.am կայքից): Պահպանվում է սեռային և տարիքային բալանս: Դաշտային աշխատողների տարիքը տատանվում է 20-ից 30 տարեկան: Դաշտային աշխատողները ստանում են կազմակերպությունն ներկայացնող անվանաքարտեր, որոնց կրելն պարտադիր է: Հետազոտության յուրաքանչյուր դաշտային օր նրանց տրվում է անհրաժեշտ քանակությամբ հարցաթերթեր, ինչպես նաև ուղեկցող նյութեր /երթուղային թերթիկ, դաշտային տեղեկաթերթ, ընտրանքի և հարցաթերթերի լրացման ուղեցույցներ, քարտեր, գրիչ և այլ անհրաժեշտ պարագաներ/:

***Որակի ստուգում***

Հարցազրույցների որակի ստուգումը իրականացվում է հետևյալ չորս փուլերով.

I. Դաշտային կոորդինատորների կողմից հարցազրուցավարների վերահսկում
II. Հարցաթերթերի որակի ստուգում
III. Հեռախոսազանգով ստուգում
IV. Հետադարձ այցի միջոցով ստուգում

Որակի ստուգման կազմակերպումը նշված մեթոդներով IPSC կազմակերպության առանձնահատկությունն է, ինչը հնարավություն է տալիս ստուգել հարցաթերթիկների առաջնային մակարդակում 100%, իսկ երկրորդային մակարդակում՝ առնվազն 45%:

Նման աշխատանքի արդյունքում սովորաբար արդյունքների ճշգրտության մակարդակը հասնում է 99%-ի, ինչը հնարավորություն է տալիս առավել ճշգրիտ տեղեկատվություն և խորհրդատվություն տրամադրել՝ բոլոր շահագրգիռ կողմերին:

Ասվածի ակնառու օրինակ է Երևանի քաղաքապետի 2009թ.-ի մայիսի ընտրությունները, որից առաջ անցկացված սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքում IPSC կազմակերպության կողմից հրապարակված տվյալները մինչև 1% ճշտությամբ համապատասխանեցին ընտրության արդյունքներին:

***Տվյալների մշակում***

Հետազոտության դաշտային փուլին զուգահեռ իրականացվում է տվյալների մշակում և նախապատրաստում մուտքագրմանը. դաշտից եկած ստուգված և համարակալված հարցաթերթերն անցնում են տվյալների մշակման փուլ, որն իր հերթին բաղկացած է հետևյալ ենթափուլերից.

1. Բաց և կիսափակ հարցերի փակում
2. Հարցաթերթերի կոդավորում
3. Տվյալների բազայի պատրաստում, տվյալների մուտքագրում
4. Տվյալների բազայի ստուգում, խմբավորում, մաքրում

***Ներկայացվող արդյունքներ***

Հետազոտության արդյունքները նախատեսվում է ներկայացնել նշված փաստաթղթերով՝

1. **Մեթոդաբանական հաշվետվություն՝** դաշտային աշխատանքների իրականացման մանրամասն նկարագրությամբ,
2. **Powerpoint show պրեզենտացիա (PPS)՝** հետազոտության արդյունքների բովանդակային վերլուծության և առաջարկների մանրամասն ներկայացմամբ,
3. **Վերջնական համառոտ հաշվետվություն՝** ներկայացումների արդյունքում ծագած հարցադրումների ընդգրկմամբ և ռազմավարական առաջարկների մատնանշմամբ:

Հետազոտության ընթացքում բոլոր նյութերը ներկայացվելու են **հայերեն լեզվով:**

***Հետազոտության ժամանակացույց***

GS Index և ES Index հետազոտությունները նախատեսվում է իրականացնել 2009թ.-ի նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների ընթացքում հետևյալ ընթացակարգով.

**IPSC- Institute for Political and Sociological Consulting**
**"Այ Փի Էս Սի" Քաղաքական և Սոցիոլոգիական Խորհրդատվությունների Ինստիտուտ**

**ՀՀ Կառավարության համար անցկացվող հետազոտությունների ժամանակացույց**

| 2009 | | Նոյեմբեր | | | | Դեկտեմբեր | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| N | Գործողություն | 1 | 2 | 3 | 4 | 1 | 2 | 3 | 4 |
| I | GS Index հետազոտության նախապատրաստական աշխատանքներ | ■ | | | | | | | |
| | GS Index հետազոտության մեթոդաբանության և հարցաթերթի մշակում | ■ | ■ | | | | | | |
| | GS Index հետազոտության դաշտային աշխատանքների իրականացում | | ■ | | | | | | |
| | GS Index հետազոտության տվյալների մշակում և վերլուծություն | | | ■ | ■ | | | | |
| | GS Index հետազոտության հաշվետվություն և արդյունքների | | | | ■ | ■ | | | |
| II | ES Index հետազոտության նախապատրաստական աշխատանքներ | | | ■ | ■ | | | | |
| | ES Index հետազոտության մեթոդաբանության և հարցաթերթի մշակում | | | | ■ | ■ | | | |
| | ES Index հետազոտության դաշտային աշխատանքների իրականացում | | | | | ■ | ■ | | |
| | ES Index հետազոտության տվյալների մշակում և վերլուծություն | | | | | | ■ | ■ | |
| | ES Index հետազոտության հաշվետվություն և արդյունքների | | | | | | | ■ | ■ |

**Գծապատկեր 2 2009թ.-ին նախատեսվող հետազոտությունների ժամանակացույց**

## 2 Բ. Ֆինանսական առաջարկ

GS Index և ES Index հետազոտությունների իրականացման համար 2 ամսիների ընդհանուր բյուջեն կազմում է 14'450'000 ՀՀ դրամ:
Ստորև ներկայացված է բյուջեի նրամասնկարագիրը:

"Այ Օի էս Սի" Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվության Ինստիտուտ
IPSC Institute for Political and Sociological Consulting

2009թ. Բյուջե (Հաշվարկված 2 ամսվա կտրվածքով, 2 հետազոտության)

Սոցիոլոգիական հետազոտությունների բաշխն

| 1 | Հիմնական աշխատանքներ | Նկարագրություն (մանրամասն նկարագրություն սեռ կից տարբերակներով) | Ամսական ԱՀՈՒՄ | Գործառույթի սոցիալական կմար | Ամիսներ | Տարեկան ԱՀՈՒՄ | Գործառույթի Տարեկան սոց. Վճար | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1.1 | Տնտես | Ընտանեկան եկամտի նկարագրությունը, բաժին հետևանքներ | 305,000 | 29,250 | 2 | 610,000 | 58,500 | |
| 1.2 | Դաշտային աշխատանքների մենեջեր | Դաշտային աշխատանքների կազմակերպում | 112,000 | 19,600 | 2 | 224,000 | 39,200 | |
| 1.3 | Տվյալների մենեջեր | Տվյալների մենեջմենթ | 112,000 | 19,600 | 2 | 224,000 | 39,200 | |
| 1.4 | Որակի ստուգման մենեջեր | Հետազոտությունների որակի ստուգում | 112,000 | 19,600 | 2 | 224,000 | 39,200 | |
| 1.5 | Որակական հետազոտությունների մենեջեր | Որակական հետազոտությունների կազմակերպում, անցկացում | 112,000 | 19,600 | 2 | 224,000 | 39,200 | |
| 1.6 | Վերլուծություն | Տվյալների վերլուծություն, հաշվետվությունների | 176,000 | 22,800 | 0 | 0 | 0 | |
| 1.7 | Գրառողների մենեջեր | Գրառողների աշխատանքների նոպման կազմակերպում | 31,000 | 8,650 | 2 | 62,000 | 17,300 | |
| 1.8 | Հաշվարարի/հրավերներ | | 31,000 | 8,650 | 2 | 62,000 | 17,300 | |
| 1.9 | Հավաքարար | | 15,500 | 7,000 | 2 | 31,000 | 14,000 | |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | 1,006,500 | 154,750 | | 1,661,000 | 263,900 | 1,924,900 |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| 2 | Գրառումներ/նկարահանումներ | Նկարագրություն | Ծախսեր | | Ամիսներ | | | Ընդամենը |
| 2.1 | Գրառումների վարձակալություն | Նվազագույն 10% նվազեցմամբ | 330,000 | | 2 | | | |
| 2.2 | Գրառումների ծախսեր, հոսանք, ջեներատոր | Մոգզնում է գոնեական պիտույքներ և բոլոր անհրաժեշտ այլ ապրանքներ | 200,000 | | 2 | | | |
| 2.3 | Գրառվածում և կառավարում | Գրքեր, մեդալներ, սերտիֆիկատներ, հատուցումներ, հատուցումներ և այլ | 30,000 | | 2 | | | |
| 2.4 | Այլ ծախսեր | Տեխնիկական և ad-hoc ծախսեր | 30,000 | | 2 | | | 1,180,000 |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | 590,000 | | 2 | | | |
| | | | | | | | | |
| | | Հետազոտական նախագծեր՝ քաղաքացիա-իրավական պարտավորություններ | | | | | | |
| 3 | Սոցիոլոգիական հետազոտություններ | Նկարագրություն | Գումար | | Քանակ | | | Ընդամենը |
| 3.1 | GS Index | Տարեկան գրաֆ անցում | 6,600,000 | | 1 | | | 6,600,000 |
| 3.2 | Quality of Life Survey | Տարեկան մեկ անգամ | 18,380,000 | | 0 | | | 0 |
| 3.3 | Education Success Index | Տարեկան երեք անգամ | 3,800,000 | | 1 | | | 3,800,000 |
| 3.4 | Որակական հետազոտություն | Տարեկան 10 հոլով խելի 20 խորին խորհրդատվության հաշվարկով | 700,000 | | 0 | | | 0 |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | 10,400,000 |
| | | | | | | | | |
| | Ընդհանուր ծախսեր | | | | | | | 13,504,900 |
| | Այլ անորակի ծախսեր | Ընդհանուր գումար 7%-ի չափով, (որից կմարվում է 20% շահույթախոսով) | | | | | | 945,343 |
| | | ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԳԻՆԸ | | | | | | 14,450,243 |
| | ԱՍՀ | 58 Մեկ ՀՀ դրամն անցնելու դեպքում՝ 20% | | | | | | 0 |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐԵԿԱՆ ԳԻՆԸ | | | | | | 14,450,243 |

Գծապատկեր 3 2009թ. նոյեմբեր դեկտեմբեր ամիսների հաշվարկային բյուջե